ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ

2014-2018 թթ.
ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԼԱՆ

Վանաձոր, 2014

Փաստաթուղթը մշակվել է ՀՔԱ Վանաձորի կայունության և ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման ծրագրերի շրջանակներում՝ Բաց Հասարակություն Հիմնադրամների և Քաունթերփարթ Ինթերնեշնլ-Հայաստանի աջակցությամբ: Փաստաթղթում ներկայացված դիրքորոշումները ՀՔԱ Վանաձորի գրասենյակինն են և կարող են չհամընկնել ֆինանսավորող կառույցների կարծիքների հետ: Սույն ռազմավարական պլանը մշակվել է կազմակերպության 2011-2015 թթ. ռազմավարական պլանի գնահատման և վերանայման արդյունքում: 2011-2015 թթ. ռազմավարական պլանը ուժը կորցրած է համարվում ՀՔԱ Վանաձորի Խորհրդի կողմից սույն փաստաթղթի հաստատումից հետո: Սույն փաստաթուղթը կվերանայվի երկու տարին մեկ՝ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի խորհրդի և ղեկավար անձնակազմի կողմից կազմակերպության գործունեության գնահատման արդյունքում:

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ

2014-2018 թթ.
ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԼԱՆ

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի տեսլականն է՝ մարդու արժանապատվության, ժողովրդավարության և խաղաղության գերակա արժեքներով ձևավորված հասարակություն,

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի առաքելությունն է՝ ազգային և տարածաշրջանային մակարդակներում քաղաքացիական նախաձեռնությունների աջակցությունն ու խթանումը, խաղաղասիրական ու իրավապաշտպանական գործունեության հզորացումը:

Բովանդակություն

Ով ենք մենք 7
Ինչ է կատարվում 8
Ինչ ենք մենք անում 9
Ում հետ ենք մենք աշխատում 11
Ինչի ենք հասել մինչ այժմ 13
Ինչի ենք մենք հասնելու 16
ՀՔԱ Վանաձորի գրասենյակի 2014-2018 թթ. ռազմավարական նպատակներն ու խնդիրները 16
Հավելված Ա. ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կառուցվածք 35
Հավելված Բ. 2014-2018 թթ. ռազմավարական պլանի իրականացման մոտավոր բյուջե 36
Հավելված Գ. Անդամներ 37
Հավելված Դ. Գործընկերներ և ցանցեր 38
Միջպետական և միջազգային գործընկեր կազմակերպություններ 38
Միջազգային և տեղական ցանցեր 38
Տեղական գործընկեր կազմակերպություններ 39

Ով ենք մենք

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակը /այսուհետ` ՀՔԱ Վանաձորի գրասենյակ/ ոչ քաղաքական, ոչ կրոնական, շահույթ չհետապնդող հասարակական կազմակերպություն է, որը միավորում է ժողովրդավարության, հանդուրժողության, բազմակարծության և մարդու իրավունքների գերակայության սկզբունքներն արժևորող անհատների:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը հիմնադրվել է 1998 թվականին որպես ՀՔԱ Հայաստանի կոմիտեի մասնաճյուղ, գրանցվել է 2001 թվականին և վերագրանցվել է 2005 թվականին ՀՀ արդարադատության նախարարությունում: Կազմակերպության գլխավոր գրասենյակը գտնվում է Լոռու մարզկենտրոն[1] Վանաձորում: Կազմակերպությունն ունի ներկայացուցչություններ Սպիտակ և Երևան քաղաքներում: Կազմակերպության գործունեության աշխարհագրությունը ընդգրկում է ինչպես Լոռու մարզը, այնպես էլ հանրապետության ողջ տարածքը:

Կազմակերպության գերագույն ղեկավար մարմինը Ընդհանուր ժողովն է, որը Կազմակերպության կառավարման և գործունեության վերաբերյալ վերջնական որոշումներ կայացնելու իրավասություն ունի: Ընդհանուր ժողովը բաղկացած է Կազմակերպության անդամներից: ՀՔԱ Վանաձորի գրասենյակն ունի 14 անդամ:

Ընդհանուր ժողովների միջև ընկած ժամանակահատվածում Կազմակերպության ընթացիկ գործունեությունը վերահսկվում է Կազմակերպության խորհրդի կողմից: Խորհուրդը ներկայացուցչական մարմին է, որն ընտրվում է ընդհանուր ժողովի կողմից: ՀՔԱ Վանաձորի գրասենյակի խորհուրդը պաշտոնապես ընտրվել է 2012 թ. մարտին և բաղկացած է 5 անդամից:

Կազմակերպության գործունեության հիմնական բնագավառներն են՝ մարդու իրավունքների, շահերի պաշտպանություն և խաղաղասիրություն: Իր գործունեությունն իրականացնելիս կազմակերպությունը ելնում է Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային փաստաթղթերի, նորմերի տեղայնացման և պաշտպանության անհրաժեշտությունից:

Հայաստանի Հանրապետությունը Միացյալ ազգերի կազմակերպությանը անդամագրվել է 1992 թ. մարտի 22-ին, իսկ Եվրոպայի խորհրդին՝ 2001 թվականի հունվարի 25-ին: Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է միջազգային եւ տարածաշրջանային մի շարք կոնվենցիաներ եւ փաստաթղթեր՝ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը եւ կից արձանագրությունը, Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման մասին կոնվենցիան (1993 թվական), Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան, կից արձանագրությունը (2002 թվական), Վերանայված եվրոպական սոցիալական խարտիան (2001 թվական), Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիան (2001 թվական), Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման մասին եվրոպական կոնվենցիան (2001 թվական):

[1] Լոռու մարզը իր տարածքով /3789 կմ² տարածքով` Հայաստանի տարածքի 12.7%/ հանրապետության երրորդ մարզն է: Մարզի բնակչությունը կազմում է 234,700 մարդ /2013 թվականի տվյալներով/, որի 58.46%-ը քաղաքաբնակ է:

Ինչ է կատարվում

2013 թ. նշանավորվեց մի շարք կարևոր իրադարձություններով, որոնք ազդեցին Հայաստանի հանրապետության յուրաքանչյուր բնակչի այդ թվում իրավապաշտպանների և իրավապաշտպան կազմակերպությունների համար: ներկա իրավիճակը հանգամանալից կերպով վերլուծության է ենթարկվել և ներկայացվել է ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից բազմաթիվ թեմատիկ զեկույցներում:

Ըստ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի՝ Հայաստանի հանրապետությունում մարդու իրավունքների հիմնական մարտահրավերը Սերժ Սարգսյանի որոշումն է միանալու Ռուսաստանի, Ղազախստանի և Բելառուսի հետ Մաքսային միությանը՝ ձախողելով Ասոցացման համաձայնագրի նախաստորագրումը: Մաքսային միության մի շարք անդամ երկրներում՝ Ռուսաստանում, Բելառուսում և Ղազախստանում, քաղաքացիական հասարակության իրավունքների սահմանափակման և ահաբեկման ընդունված գործելակերպը մեծ հույս չի ներշնչում, իսկ իրավապաշտպանների նկատմամբ Հայաստանի կառավարության ոտնձգությունների ծավալների աճով հստակ ուրվագծվում է քաղաքացիական հասարակության նկատմամբ շատ ավելի անբարյացակամ դիրքորոշում որդեգրելու Հայաստանի կառավարության հակումը:

Այս իրավիճակում ՀՔԱ Վանաձորի գրասենյակը ձգտում է համագործակցել գործընկերների հետ՝ նվազեցնելու պետության քաղաքականության հետ կապված ռիսկերը, ինչպես նաև կանխարգելելու այն բացասական միտումները, որոնք արդեն իսկ տեսանելի են իրավապաշտպանների և իրավապաշտպան կազմակերպությունների նկատմամբ աճող ճնշումների տեսքով: Հաշվի առնելով նոր մարտահրավերները՝ ՀՔԱ Վանաձորի գրասենյակը կարևորում է իր անձնակազմի կարողությունների շարունակական զարգացումը՝ ապահովելու որպեսզի կազմակերպությունը շարունակի իրականացնել իր գործողությունները ներկայիս անորոշ իրավիճակում և աշխատել քաղաքացիական հասարակության գործընկերների հետ՝ Հայաստանը կրկին ժողովրդավարական զարգացման և եվրոպական ինտեգրման ուղի վերադարձնելու նպատակով:

Ինչ ենք մենք անում

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը որդեգրել է մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ համալիր մոտեցում, որն ուղղված է ինչպես իրավունքների խախտման կանխարգելմանը, այնպես էլ խախտված իրավունքների վերականգնմանը: ՀՔԱ Վանաձորի գրասենյակը մարդու իրավունքների պաշտպանությունն իրականացնում է հետևյալ տրամաբանությամբ՝ անհատ -> խումբ-> հասարակություն և պետական հաստատություններ:

- ✧ Իրավական աջակցություն
  - Անվճար իրավական աջակցություն (գրավոր և բանավոր)
  - Դատական պաշտպանություն, ներկայացուցչություն
  - Արագ արձագանքում/թեժ գիծ
- ✧ Մարդու իրավունքների մշտադիտարկում/քաղաքացիական վերահսկողություն (այցելությունների, պաշտոնական գրությունների, հասարակական հարցումների, զանգվածային լրատվամիջոցների և այլ միջոցներով)
  - Փակ և կիսափակ հաստատություններում
  - Ընտրական գործընթացների նկատմամբ
  - Դատաքննության նկատմամբ
  - Թիրախային ոլորտներում պետական ծախսերի նկատմամբ
  - Թիրախային ոլորտներում պետական ծրագրերի իրականացման նկատմամբ
  - Տեղական ինքնակառավարման մարմինների կառավարման նկատմամբ
- ✧ Քաղաքացիական նախաձեռնություն և շահերի պաշտպանություն
  - Իրազեկության բարձրացում (արշավներ, հրապարակումներ, հանրային միջոցառումներ/ մամլո ասուլիսներ, քննարկումներ, շնորհանդեսներ, հրատապ հայտարարություններ, բողոքի ակցիաներ)
  - Օրենսդրության և պրակտիկայի ուսումնասիրություն ու վերլուծություն, օրենսդրական նախաձեռնություններ
  - Ռազմավարական դատավարություններ
  - ՀՀ միջազգային պարտավորությունների վերաբերյալ ստվերային զեկույցների պատրաստում և ներկայացում
  - Հայաստանում մարդու իրավունքների իրավիճակի վերաբերյալ տեղեկատվության ներկայացում միջազգային կազմակերպություններին /հրատապ հայտարարություններ, զեկույցներ/

Անհատական մակարդակում ՀՔԱ Վանաձորի գրասենյակի աշխատակիցները քաղաքացիներին տրամադրում են անվճար իրավաբանական օգնություն մի շարք հարցերի շուրջ, իսկ նրանց իրավունքների խախտման դեպքերում ներկայացնում են նրանց շահերը դատարանում կամ աջակցում են նրանց պաշտոնական հարցումներ, հանցագործության մասին հաղորդումներ, հայցեր և բողոքներ կազմելու և ներկայացնելու հարցում: Մենք ոչ միայն ընդունում ենք քաղաքացիներին մեր գրասենյակում, այլն ինքներս ենք այցելում նրանց (տանը, կալանավայրում, բանտում կամ այլ հաստատությունում) և իրավաբանական խորհրդատվություն ենք տրամադրում

Հայաստանի տարածքում գործող թեժ գծի միջոցով: ՀՔԱ Վանաձորի գրասենյակը յուրաքանչյուր տարի անվճար իրավաբանական խորհրդատվություն և աջակցություն է տրամադրում մոտ հազար քաղաքացու: ՀՔԱ Վանաձորի գրասենյակն ամեն տարի մոտ 50 սոցիալապես անապահով անձի շահեր է ներկայացնում դատարանում: Բացի այդ կազմակերպությունը տաեկան վարում է մոտ երեսուն ռազմավարական գործ: Ռազմավարական գործերն ընտրվում են ըստ մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում օրենսդրության կամ իրավակիրառ պրակտիկայի վրա իրենց պոտենցիալ ազդեցության հիման վրա:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակն իրականացնում է մշտադիտարկում (մոնիթորինգ) և տվյալների հավաքագրում (այցելությունների, պաշտոնական հարցումների, սոցիալական ուսումնասիրությունների, զանգվածային լրատվամիջոցների և այլ աղբյուրների միջոցով)՝ փակ և կիսափակ հաստատություններում, դատարաններում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում մարդու իրավունքների իրավիճակը գնահատելու համար: ՀՔԱ Վանաձորի գրասենյակը իրականացնում է նաև դիտորդական առաքելություն համապետական և ՏԻՄ ընտրությունների ժամանակ, ինչպես նաև պետական ծախսերի և թիրախ ոլորտներում պետական ծրագրերի իրականացման մշտադիտարկում, որոնք ներառում են, սակայն չեն սահմանափակվում հետևյալ ծրագրերով՝ բարեփոխումներ ՀՀ ոստիկանության և դատական մարմինների գործունեության ոլորտում, հաշմանդամություն ունեցող անձանց բժշկական և այլ օգնության տրամադրում և այլն:

Իրավաբանական խորհրդատվության և մշտադիտարկման արդյունքում ստացվող տվյալները օրենսդրական վերլուծության հետ մեկտեղ գործածվում են իրավական նորմերի և իրավակիրառ պրակտիկայի բարեփոխման առաջարկություններ և զեկույցներ կազմելու համար:

Ում հետ ենք մենք աշխատում

ՀՔԱ Վանաձորի գրասենյակն օրենսդրական առաջարկություններ է ներկայացնում որոշում կայացնողներին և օրենսդիրներին, իրականացնում է և (կամ) մասնակցում է իրազեկման բարձրացմանն ուղղված միջոցառումներին (ինչպիսիք են՝ իրազեկման բարձրացման արշավները, հրապարակումները, հանրային լսումները, մամլո ասուլիսները, քննարկումները, շնորհանդեսները, հրատապ հաշվետվությունները, զեկույցները և բողոքի ակցիաները), հայցեր է ներկայացնում ՀՀ Սահմանադրական դատարան և Մարդու իրավունքների եվրոպական դատարան (ՄԻԵԴ):

Այլ իրավապաշտպան կազմակերպությունների հետ համատեղ Կազմակերպությունը պատրաստում և ներկայացնում է ստվերային զեկույցներ Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների կատարման վերաբերյալ:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի գործունեությունը նվիրված է հետևյալ թիրախ խմբերի իրավունքների պաշտպանությանը

- Զինծառայողներ, զորակոչիկներ և նրանց ընտանիքներ
- Ռազմագերիներ, անհայտ կորածներ, հակամարտություններից տուժածներ և նրանց ընտանիքներ
- Հոգեկան և մտավոր հաշմանդամություն ունեցող անձինք և նրանց ընտանիքներ
- Դատապարտյալներ, կալանավորներ և նրանց ընտանիքներ
- Թմրամիջոց գործածողներ և նրանց ընտանիքներ
- Քրեական գործերում ներգրավված վկաներ, տուժածներ, կասկածյալներ, մեղադրյալներ և նրանց ընտանիքներ
- Քաղաքացիական և քաղաքական ակտիվիստներ
- Ընտրողներ, դիտորդներ
- Կրոնական փոքրամասնություններ
- Սոցիալապես խոցելի խմբեր
- Երիտասարդներ

Կազմակերպության գործողությունների, զեկույցների, նախաձեռնությունների և առաջարկությունների համար թիրախ լսարան են հանդիսանում հետևյալ կառույցները, որոնք ուղղակի կամ անուղղակի ազդեցություն ունեն որոշումների կայացման վրա.

- Դատական ատյանները
  - ՀՀ ընդհանուր իրավասության դատարան
  - ՀՀ առաջին ատյանի վարչական դատարան
  - ՀՀ վերաքննիչ քրեական դատարան
  - ՀՀ վերաքննիչ քաղաքացիական և վարչական դատարան
  - ՀՀ վճռաբեկ դատարան
  - ՀՀ սահմանադրական դատարան
  - Մարդու իրավունքների եվրոպական դատարան
- ՀՀ տեղական ինքնակառավարման մարմիններ
  - Ավագանի
  - Քաղաքապետարան
- ՀՀ մարզային իշխանություններ
- ՀՀ կառավարություն
  - ՀՀ արդարադատության նախարարություն (Քրեակատարողական վարչություն)

  - ՀՀ պաշտպանության նախարարություն
  - ՀՀ առողջապահության նախարարություն
  - ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն
  - ՀՀ կրթության եւ գիտության նախարարություն
  - ՀՀ արտաքին գործերի նախարարություն
  - ՀՀ դատախազություն
  - ՀՀ ոստիկանություն
  - ՀՀ ազգային անվտանգության ծառայություն
  - ՀՀ Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե
- ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով
- ՀՀ մարդու իրավունքների պաշտպան
- ՀՀ ազգային ժողով
  - Պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողով
  - Առողջապահության, մայրության եւ մանկության հարցերի մշտական հանձնաժողով
  - Սոցիալական հարցերի մշտական հանձնաժողով
  - Պաշտպանության, ազգային անվտանգության եւ ներքին գործերի մշտական հանձնաժողով
  - Մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողով
  - Եվրոպական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողով
  - Արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողով
- Զանգվածային լրատվամիջոցներ
- Միջպետական և միջազգային կառույցներ
  - ՄԱԿ-ի մարդու իրավունքների գերագույն հանձնակատար
  - ՄԱԿ-ի մարդու իրավունքների խորհուրդ
  - ՄԱԿ-ի խոշտանգումների դեմ կոմիտե
  - ՄԱԿ-ի հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների կոմիտե
  - Ովրոպայի խորհուրդ
  - Մարդու իրավունքների եվրոպական դատարան
  - Խոշտանգումների կանխարգելման եվրոպական կոմիտե
  - ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ
  - Եվրոպական միություն
  - Եվրոպայի արտաքին գործունեության ծառայություն
  - դրամաշնորհատու կառույցներ
- Հասարակությունն ընդհանուր առմամբ

Ինչի ենք հասել մինչ այժմ

ՀՔԱ Վանաձորի գրասենյակն իր գործունեության 15 տարվա ընթացքում ունեցել է մի շարք ձեռքբերումներ և հաջողություններ՝ միաժամանակ հանդիպելով խոչընդոտների և մարտահրավերների:

Մեր ձեռքբերումներն են.

1. Աջակցություն ՀՀ-ում անցկացվող ընտրությունների նկատմամբ հանրային հսկողության մեխանիզմների մշակմանը:
2. Փակ և կիսափակ հաստատություններում մարդու իրավունքների մշտադիտարկման ինստիտուտի կատարելագործմանը, մշտադիտարկման գործիքների մշակմանը և կիրառմանը:
3. ՀՔԱ Վանաձորի գրասենյակը ձեռք է բերել մեծ հեղինակություն. եթե նախկինում քաղաքացիները հիմնականում դիմում էին Կազմակերպություն սեփականության իրավունքի կապակցությամբ այլ քաղաքացիների հետ առաջացած վեճերով, ապա ներկայումս մարդիկ սկսել են դիմել ավելի զգայուն հարցերով, ինչպիսիք են՝ մարդու իրավունքները զինված ուժերում (Ադրբեջանի հետ չկարգավորված հակամարտության պատճառով հայկական բանակի որևէ քննադատություն պիտակավորվում է որպես դավաճանություն և աջակցություն թշնամուն), զինվորների և զորակոչիկների առողջության հետ կապված և այլ բնույթի խնդիրներ:
4. Համակարգված և ակտիվ մշտադիտարկման և հաշվետվությունների շնորհիվ ՀՔԱ Վանաձորի գրասենյակը վերածվել է զինված ուժերում մարդու իրավունքների իրավիճակի վերաբերյալ տեղեկատվության հուսալի աղբյուրի՝ դրանով իսկ խթանելով ՀՀ պաշտպանության նախարարության հաշվետվողականությունը, որը սկսել է ավելի արագ և պատրաստակամ արձագանքել և դարձել է ավելի նախաձեռնողական հանրությանն իր որոշումների, միջադեպերի և մարտահրավերների վերաբերյալ իրազեկելու հարցում:
5. ՀՔԱ Վանաձորի գրասենյակն արդեն երեք տարի (2010-2013թթ.) կատարում է համակողմանի ուսումնասիրություններ և աշխատանք տանում ոստիկանություն-քաղաքացի հարաբերություններում մարդու իրավունքների ոլորտում. այդուհանդերձ, հարկավոր է շարունակել այդ ջանքերը հիմնարար և համակարգային փոփոխություններ կատարելու համար: Առաջնորդվելով այս նպատակով՝ ՀՔԱ Վանաձորի գրասենյակը սկսել է նաև աշխատել Ազգային անվտանգության ծառայության, Հատուկ քննչական ծառայության և Գլխավոր դատախազի կողմից կատարված մարդու իրավունքների խախտումները բացահայտելու ուղղությամբ: Աջակցությունը հիմնականում ուղղած է լինելու ոստիկանություն-քաղաքացի հարաբերություններում մարդու իրավունքների մշտադիտարկմանը, ոստիկանության կամայականությունների գնահատմանը և ոստիկանության կողմից վարվող մարդու իրավունքների խախտման վերաբերյալ դատական գործերը:

6. Կազմակերպության հիմնական նպատակներից է կառավարման մարմինների թափանցիկության և հաշվետվողականության խթանումը, սակայն նման հաստատությունները հիմնականում փակ են հանրային վերահսկողության առումով և հազվադեպ են արդյունավետ երկխոսության մեջ մտնում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ: ՀՔԱ Վանաձորի գրասենյակի հաջողված փորձերից է ՀՀ առողջապահության նախարարության հետ աշխատանքը Հայաստանում հոգեբուժական օգնության տրամադրման բարեփոխումների ոլորտում:
7. ՀՔԱ Վանաձորի գրասենյակի առաջարկությամբ փոփոխվել է «Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ օրենքը: Մի շարք փոփոխություններ և լրացումներ են կատարվել նաև «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման մասին» օրենքի նախագծում, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծում, Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագրում, ինչպես նաև հանրային շահերը պաշտպանող հասարակական կազմակերպություններին և Մարդու իրավունքների պաշտպանին իրավական ներկայացուցչի և դատավարության մասնակցի կարգավիճակ շնորհելու հնարավորությունը առանց այն անձանց ուղղակի պատվիրակման կամ թույլտվության, ում իրավունքները խախտվել են:
8. Չնայած գործադիր իշխանությունից դատական իշխանության կախվածությանը՝ ՀՔԱ Վանաձորի գրասենյակը հասել է որոշակի հաջողությունների ռազմավարական դատավարությունների միջոցով: Ի թիվս այլոց՝ վերջերս արձանագրվել են հետևյալ ձեռքբերումները:
    - ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից ՀՀ պաշտպանության նախարարությանն ուղղված հարցումների արդյունքում պարզվել է, որ «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» օրենքի դրույթներից մեկով արգելվում էր տեղեկատվություն ստանալ գաղտնագրված տեղեկությունների մասին, ինչը նշանակում է, որ անհնար էր պարզել, թե արդյոք պահանջվող տեղեկությունը գաղտնագրված էր, թե պետական մարմինները պարզապես հրաժարվում էին տրամադրել այն: ՀՔԱ Վանաձորի գրասենյակի դիմումի հիման վրա ՀՀ Սահմանադրական դատարանը վճռել է, որ «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» օրենքի 12-րդ հոդվածի 7-րդ կետի դրույթն առ այն, որ «զերատեսչական ցանկերը գաղտնագրվում են և հրապարակման ենթակա չեն», հակասում է ՀՀ Սահմանադրության 27-րդ և 43-րդ հոդվածների պահանջներին: ՀՀ Ազգային ժողովը նշված որոշումը վերածել է համապատասխան օրենսդրական փոփոխության:
    - Մինչ 2010 թվականն անհատները կամ հասարակական կազմակերպություններն իրավունք ունեին հայց ներկայացրել ՀՀ վարչական դատարան միայն իրենց իրավունքների խախտման դեպքում: ՀՔԱ Վանաձորի գրասենյակի հայցի հիման վրա ՀՀ Սահմանադրական դատարանը որոշում է կայացրել առ այն, որ «Շահերի

պաշտպանությամբ և մասնավորապես որոշակի կոլեկտիվ և հանրային շահերի պաշտպանությամբ զբաղվող կազմակերպություններն իրավունք ունեն դիմելու դատարան կամ այլ հաստատություն՝ այլ անձանց խախտված իրավունքները պաշտպանելու համար»: Այս դիրքորոշումը համահունչ է «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 15.1.3 հոդվածին, ըստ որի՝ «Իր կանոնադրությամբ նախատեսված նպատակներն օրենքով սահմանված կարգով իրագործելու համար՝ կազմակերպությունն իրավունք ունի իր և իր անդամների իրավունքներն ու օրինական շահերը ներկայացնել և պաշտպանել այլ կազմակերպություններում, դատարանում, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում»: Նշված որոշման կայացումից հետո մի շարք հասարակական կազմակերպություններ, այդ թվում՝ ՀՔԱ Վանաձորի գրասենյակը հնարավորություն ստացան վարչական դատարանում վիճարկելու վարչական ակտերը նույնիսկ այն դեպքերում, երբ իրենց իրավունքները կամ օրինական շահերն ուղղակիորեն չեն խախտվել:

- Զրպարտության և վիրավորանքի ապաքրեականացումից հետո պետական պաշտոնյաները մեծ թվով հայցեր են ներկայացրել քաղաքացիների, կազմակերպությունների կամ լրատվամիջոցների դեմ: ՀՔԱ Վանաձորի գրասենյակի հետ առնչվող մի գործով ՀՀ վճռաբեկ դատարանը կայացրել է նախադեպային որոշում՝ սահմանելով զրպարտության 4 չափանիշներ, որոնք ստորադաս դատարանների համար ծառայել են որպես ուղղորդող սկզբունքներ վիրավորանքի և զրպարտության վերաբերյալ որոշումներ կայացնելու համար, մինչդեռ նախկինում դատարանները նման գործերով հաճախ կայացնում էին մասնակի կամ վիճահարույց որոշումներ:

Իր գործունեության ընթացքում ՀՔԱ Վանաձորի գրասենյակը հաճախ բախվել է այնպիսի դեպքերի, երբ տուժող կողմն զրկված է եղել դատավարությանը մասնակցելու իրավունքից: ՀՔԱ Վանաձորի գրասենյակի հայցի հիման վրա ՀՀ վճռաբեկ դատարանը որոշում է կայացրել առ այն, որ քրեական դատավարության նպատակն է ոչ միայն բացահայտել հանցագործությունը և պատասխանատվության ենթարկել հանցագործներին, այլև ապահովել հանցագործությունից տուժած անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը: Տուժողի մասնակցությունը քրեական դատավարությանը մի կողմից անհրաժեշտ նախապայման է հանդիսանում նրա իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար, իսկ մյուս կողմից նպաստում է քրեական գործի հանգամանքների ամբողջական, համակողմանի և անկողմնակալ քննությանը: Կայացվել է նախադեպային որոշում՝ տուժող կողմի շահերի լիարժեք պաշտպանությունը երաշխավորելու համար նրան գործի վարույթում ներգրավելու և հետաքննության ողջ ընթացքի մասին տեղեկացնելու վերաբերյալ:

Ինչի ենք մենք հասնելու

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի 2014-2018 թթ. ռազմավարական նպատակներն ու խնդիրները

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ **1. Նպաստել թիրախ խմբերի մարդու իրավունքների պաշտպանությանը և խախտված իրավունքների վերականգնման ազգային մեխանիզմների հզորացմանը**
1.1 Տրամադրել իրավաբանական խորհրդատվություն և աջակցություն թիրախ խմբերի ներկայացուցիչներին կազմակերպությանը դիմելու և/կամ արագ արձագանքման արդյունքում բացահայտված մարդու իրավունքների խնդիրների վերաբերյալ
1.2 Մշակել օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի փոփոխությանն և միջազգային չափորոշիչներին համապատասխանեցմանն ուղղված առաջարկներ թիրախ ոլորտներում բացահայտված խնդիրների լուծման նպատակով
1.3 Աջակցել Մարդու իրավունքների մշտադիտարկում իրականացնող դիտորդական ինստիտուտի ձևավորմանը և ներդրմանը
1.4 Նպաստել ՀՀ ի կողմից ՄԻ բնագավառումստանձնած միջազգային պարտավորությունների կատարմանը` կատարողականի վերաբերյալ զեկույցների և առաջարկությունների մշակման և ներկայացման միջոցով
ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ **2. Նպաստել մարդու իրավունքների գաղափարի տարածմանը, իրավապաշտպանական և խաղաղասիրական շարժման ընդլայնմանը ՀՀ-ում**
2.1 Բարձրացնել քաղաքացիների իրազեկվածության մակարդակը մարդու իրավունքների, իրավապաշտպանական և խաղաղասիրական գործունեության վերաբերյալ
2.2 Նպաստել մարդու իրավունքների վկաների ինստիտուտի գաղափարի տարածմանը ՀՀ-ում և տարածաշրջանում
2.3 Բարձրացնել ակտիվ քաղաքացիների և կառույցների ներգրավվածությունը իրավապաշտպան շարժման մեջ՝ ազգային, տարածաշրջանային և միջազգային մակարդակներում
2.4 Նախաձեռնել և աջակցել տարածաշրջանում խաղաղասիրական նախաձեռնություններին և խթանել մեկուսացված հասարակությունների միջև փոխվստահության և երկխոսության զարգացումը
ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ **3. Նպաստել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ քաղաքացիական վերահսկողության ձևավորմանը և զարգացմանը**
3.1 Նպաստել թիրախ ոլորտներում պետական քաղաքականություն իրականացնող մարմինների գործունեության թափանցիկության և հաշվետվողականության բարձրացմանը:
3.2 Զարգացնել և տարածել Տեղական ինքնակառավարման մարմինների /ՏԻՄ/ գործունեության նկատմամբ քաղաքացիական վերահսկողության մեթոդները
ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ **4. Կազմակերպության ենթակառուցվածքային հենքի, կազմակերպական մշակույթի եվ ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում**
4.1 Կանոնակարգել կազմակերպության մարդկային ռեսուրսների կառավարումը և ներքին հաղորդակցական կապերը
4.2 Մշակել և կիրառել անձնակազմի արդյունավետ վերապատրաստման մեխանիզմներ` աշխատակիցների մասնագիտական գործունեության մակարդակը բարձրացնելու նպատակով
4.3 Զարգացնել և արդիականացնել կազմակերպության կառավարման մեխանիզմները և ենթակառուցվածքային հենքը

Ակնկալվող ընդհանուր արդյունքներ.

- ✓ Քաղաքացիների խնդիրները բարձրացնելու, անհատի խախտված իրավունքները վերականգնելու (օրինակ՝ գոհացնող դատական որոշում), նմանատիպ խնդիրներին ընդհանուր լուծումներ գտնելու հնարավորությունը գնահատելու, մարդու իրավունքների խախտումները կանխելու կարողություն,
- ✓ Փակ և կիսափակ հաստատություններում մարդու իրավունքների պաշտպանության նկատմամբ կայացած և ընդունված քաղաքացիական վերահսկողության ինստիտուտ, նման հաստատություններում մարդու իրավունքների հետ կապված խնդիրների բացահայտում և ճանաչում,
- ✓ Մարդու իրավունքների ոլորտում Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարում ՀՀ օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի բարելավման միջոցով,
- ✓ ՀՀ բնակչությունը քաջատեղյակ է մարդու իրավունքների խախտումների և պաշտպանության մեխանիզմների մասին, ինչն իր հերթին կնպաստի նման խախտումների նվազեցմանը,
- ✓ Իրավապաշտպան կազմակերպությունների և ակտիվիստների հետ իրականացվող համատեղ միջոցառումների թվի աճ, ՀՔԱ Վանաձորի գրասենյակը հանդես է գալիս որպես իրազեկվածության բարձրացման և նման նախաձեռնությունների աջակցության ռեսուրս,
- ✓ Հարցումները վկայում են հակամարտությունից տուժածների շրջանում փոխադարձ վստահության աճի մասին: Մարդկանց մոտ արմատավորվել է այն գաղափարը, որ հակամարտության խաղաղ կարգավորումը միակ հնարավոր տարբերակն է:
- ✓ Տեղական ինքնակառավարման մարմինների և պետական կառավարման մարմինների գործունեության թափանցիկության և հաշվետվողականության, ինչպես նաև քաղաքացիական հասարակության հետ համագործակցելու պատրաստակամության մակարդակի բարձրացում:

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ **2014-2018 ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԼԱՆ**				
ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ **1. Նպաստել մարդու իրավունքների պաշտպանությանը և խախտված իրավունքների վերականգնման ազգային մեխանիզմների հզորացմանը**				
Խնդիր	Միջոցառումներ	Ելք	Արդյունք	Վերջնաժամկետ
1.1. Տրամադրել իրավաբանական խորհրդատվություն և աջակցություն թիրախ խմբերի ներկայացուցիչներին կազմակերպությանը դիմելու և/կամ արագ արձագանքման արդյունքում բացահայտված մարդու իրավունքների խնդիրների վերաբերյալ	1.1.1. Հավաքագրել տվյալներ քաղաքացիներից, նրա մերձավոր ազգականներից, ականատեսներից, պետական մարմիններից, շահագրգիռ կողմերից/կառույցներից, ԶԼՄ-ներից	1.1.1. Կազմակերպություն դիմած քաղաքացիների խախտված իրավունքների վերաբերյալ տվյալների բազա, հաղորդում հանցագործության մասին , մամլո հաղորդագրություն	1.1. Քաղաքացիների խնդիրների բարձրաձայնում, խախտված իրավունքի վերականգնում, նույնատիպ խնդիրների համալիր լուծման հնարավորությունների գնահատում, մարդու իրավունքների խախտման կանխարգելում, լուծում	2014, 2015, 2016, 2017, 2018
	1.1.2. վերլուծել խնդիրը և տալ իրավական գնահատական պարզելու մարդու իրավունքների խախտման առկայությունը և բնույթը, խնդրի ռազմավարական և նախադեպային նշանակությունը, մշակել իրավունքների պաշտպանության և խախտված իրավունքների վերականգման մարտավարություն	1.1.2. խնդրի նկարագրության տեղեկանք, մարտավարական պլան		2014, 2015, 2016, 2017, 2018
	1.1.3. Ամփոփել և վերլուծել խախտված իրավունքների պաշտպանությանն ու վերականգնմանն ուղղված կազմակերպության լավագույն փորձը	1.1.3. Նախադեպային գործերի վերաբերյալ զեկույց		2014, 2016
	1.1.4. իրականացնել ռազմավարական դատավարություններ թիրախ խմբերի ներկայացուցիչների	1.1.4. դատական փաստաթղթավորված ներկայացուցչություն (՝դիմումներ, հայցեր,		2014, 2015, 2016, 2017, 2018

	խախտված իրավունքների վերականգնման նպատակով ներպետական (ՀՀ Վճռաբեկ դատարան և ՀՀ Սահմանադրական դատարան) և միջազգային (Մարդու իրավունքների եվրոպական դատարան, ՄԱԿ-ի ՄԻ կոմիտե) մակարդակներում	բողոքներ, միջնորդություններ) և նախադեպային նշանակություն ունեցող վճիռներ և/կամ որոշումներ		
	1.1.5. Զարգացնել և ընդլայնել իրավապաշտպանական գործունեությունը Լոռու մարզում և Երևան քաղաքում	1.1.5. ներկայացուցչությունների գործունեության վերաբերյալ հաշվետվություններ		2014, 2015, 2016, 2017, 2018
1.2. Մշակել օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի փոփոխությանն և միջազգային չափորոշիչներին համապատասխանեցմանն ուղղված առաջարկներ թիրախ ոլորտներում բացահայտված խնդիրների լուծման նպատակով	1.2.1. Մշակել առաջարկներ Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագրի իրականացման մշտադիտարկման և իրականացման ընթացքում ընդունվող օրենսդրական ակտերի նախագծերի ուսումնասիրության արդյունքում և ներկայացնել դրանք համապատասխան մարմիններին:	1.2.1. զեկույց և առաջարկությունների փաթեթ	1.2 Թիրախ ոլորտներում օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի փոփոխություն և համապատասխանություն ՄԻ վերաբերյալ միջազգային չափորոշիչներին	2014
	1.2.2. Մշակել առաջարկներ ՀՀ ոստիկանության գործունեության ոլորտում 2013-2014 թթ. բարեփոխումների ծրագրի իրականացման ուսումնասիրության արդյունքում և ներկայացնել դրանք ՀՀ ոստիկանություն և ՀՀ ԱԺ պաշտպանության, ազգային	1.2.2. զեկույց և առաջարկությունների փաթեթ		2015

	անվտանգության և ներքին գործերի մշտական հանձնաժողով:			
